

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Բանալի բառեր - սեփականության իրավունք, սեփականության իրավունքի առաջացում և ձեռքբերում, սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր և եղանակներ, իրավաբանական գործողություններ, իրավաբանական փաստեր, սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների դասակարգում, սկզբնական եղանակներ, ածանցական եղանակներ:

Իրավունքի տեսության մեջ ուսումնասիրելով սեփականության իրավունքի ձեռքբերման ընդհանուր հարցերը անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հարցին, որ սեփականության իրավունքի հետ կապված հայրենական օրենսդրությունը կիրառում է «առաջացում» և «ձեռքբերում» հասկացությունները: Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 10-րդ հոդվածի բովանդակությունից («Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը»), սեփականության իրավունքը, լինելով սուբյեկտիվ քաղաքացիական իրավունք, ծագում (առաջանում) է: Միաժամանակ, Օրենսգրքի 172-րդ հոդվածը արդեն նշում է սեփականության իրավունքի ձեռքբերման մասին: Ո՞րն է այդպիսի երկակիության պատճառը և ինչպիսի՞ն է նշված հասկացությունների հարաբերակցությունը:

Հաճախ գրականության մեջ նրանք հիշատակվում են որպես հոմանիշներ, սակայն միևնույն ժամանակ կան մի շարք տեսակետներ, որոնք ուղղված են այս երկու հասկացությունների տարանջատմանը: Մասնավորապես, Ա. Վ. Լիսաչենկոն հանգում է հետևյալ եզրակացությանը. «Իրավունքի առաջացման պահ կարելի է անվանել նոր սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքի սկզբանվորումը. Իրավունք չկար, այն առաջացավ անկախ սուբյեկտի գործողություններից: Ձեռքբերումն արդեն ենթադրում է որոշակի կամային գործընթաց, որի արդյունքում սկզբնավորվում է իրավունքը»:¹

¹ См. у Лисаченко А. В., Приобретение права собственности, Екатеринбург 2002, էջ 22-23:

Այստեղ հեղինակը «ձեռքբերում» հասկացությունը կապում է ձեռքբերողի գիտակցական, նպատակաուղղված գործողությունների հետ: Այդ պատճառով սեփականության իրավունքի ձեռքբերումը անցում է մի վիճակից, որտեղ անձը չի հանդիսանում գույքի սեփականատեր, մեկ այլ վիճակի, որում այդ նույն անձը հանդիսանում է գույքի սեփականատեր: Այդ անցումը համարվում է կայացած տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերողին անցման պահից: Ինչպես տեսնում ենք, «ձեռքբերում» բառն օգտագործելիս շեշտը դրվում է հենց սեփականության իրավունքի սուբյեկտի վրա: Իսկ ահա «առաջացում» բառը մենք օգտագործում ենք ոչ թե իրավունքի սուբյեկտի նկատմամբ, այլ հենց սուբյեկտի մոտ առաջացող սուբյեկտիվ իրավունքի: Այս տրամաբանությամբ, «ձեռքբերում» և «առաջացում» հասկացությունները բնութագրում են միևնույն երևույթը, բայց տարբեր տեսանկյուններից. անձը ձեռք է բերում սեփականության իրավունք, բայց սեփականության իրավունքը առաջանում է ձեռքբերողի մոտ: Հետևաբար, սույն աշխատանքում առանց էական տարբերության օգտագործել ենք երկու հասկացություններն էլ:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեն տարատեսակ կարծիքներ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի և եղանակների վերաբերյալ: Ընդհանուր կանոնի համաձայն, սեփականության իրավունքի առաջացման (ձեռքբերման) հիմքեր են հանդիսանում այն իրավաբանական փաստերը, որոնք օրենքի հիման վրա հանգեցնում են կոնկրետ գույքի նկատմամբ անձանց սեփականության իրավունքի առաջացման: Ինչ վերաբերում է սեփականության իրավունքի առաջացման եղանակներին, ապա դրանց բնութագրում են որպես «իրավահարաբերություններ, որոնք առաջանում են համապատասխան իրավաբանական փաստերի վրա»¹, «փաստական գործողություններ, որոնց հետ օրենքը կապում է սեփականության իրավունքի առաջացումը»², «իրավաչափ գործողություններ, որոնք ուղղված են սեփականության իրավահարաբերությունների ձեռքբերմանը և դադարմանը»³, սեփակա-

¹ Տե՛ս **Է. Ա. Суханов**, Российское гражданское право, Учебник, В 2 томах, Том 1, Москва 2011, էջ 519:

² Տե՛ս **Ա. Գ. Калпина, А.И. Масляева**, Гражданское право. Ч. 1. Москва 2002, էջ 272:

³ Տե՛ս **В. А. Белов**, Гражданское право. Москва 2003, էջ 485:

նության իրավունքի ձեռքբերման մեխանիզմ «որն իրենից ներկայացնում է բարդ իրավաբանական համակարգ, որի մեջ մտնում են անձի կամահայտնությունը դառնալ կոնկրետ գույքի սեփականատեր, օրենքով ամրագրված իրավաբանական փաստը, որպես իրավունքի առաջացման հիմք, որը սահմանում է անձի իրավական կայր կոնկրետ գույքի հետ, իսկ օրենքում ամրագրված որոշ դեպքերում էլ նաև նախկին սեփականատիրոջ կամքը սեփականության իրավունքով օտարել իր գույքը նոր ձեռքբերողին»¹: Շատ գիտնականներ «սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր» և «սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ» հասկացությունները համարում են միմյանց հոմանիշներ:²

Հասկանալու համար «սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ» հասկացությունը, անհրաժեշտ է հասկանալ «եղանակ» բառի իմաստը, որն ուղղված է որոշակի իրավական արդյունքի, այսինքն՝ սեփականության իրավունքի ձեռքբերման: Հայերենում եղանակ ասելով հասկանում են այնպիսի գործողություն կամ գործողությունների համակարգ, որոնք կիրառվում են ինչ-որ աշխատանք կատարելու, ինչ-որ բան անելու համար, մտածված գործելակերպ մի նպատակի հասնելու համար, մեթոդ:³ Դրանից ելնելով, ընդունված է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ համարել քաղաքացիների և կազմակերպությունների այն իրավաբանական գործողությունները, որոնք ուղղված են անձի սեփականության իրավունքի ձեռքբերմանը, այդ թվում՝ այնպիսի գործողությունները, որոնք անմիջականորեն առաջացնում են սեփականության իրավունք: Այսպիսով, եղանակները իրավաբանական իմաստով իրավական ակտերն են (ամենից առաջ՝ գործարքները), իսկ ահա հիմքերը բոլոր իրավաբանական փաստերն են (տարբեր արարքներ, հանգամանքներ և այլն):

Իհարկե, իրավունքի տեսությունը և օրենքը կարող են փոխարինել բառերի ընդհանուր նշանակությունը հատուկ իրավաբանական իմաստով, եթե դա արդարացված է գիտական և պրակտիկ տե-

¹ Տե՛ս **Якимов А. А.** Субъективное право собственности и основания его возникновения по гражданскому законодательству Российской Федерации, Москва 2005, էջ 141:

² Տե՛ս **Иоффе О. С.**, Избранные труды: В 4 томах, Том 2, Советское гражданское право, СПб 2004, էջ 392:

³ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան 1969, էջ 547:

սանկյունից: Սրա հետ կապված միանգամայն հնարավոր են համարվում տարբեր իրավաբանների սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների վերաբերյալ վերը նշված բնորոշումները: Միաժամանակ չի կարելի համաձայնվել այն տեսակետներին, որոնք սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներին դիտում են որպես փաստական գործողություններ: Մասնավորապես, Մ. Մ. Պոպովիչը գրում է. «Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը ինքնուրույն չեն փոխանցում սեփականության իրավունք: Այդ իրավունքը մինչև որոշակի պահը մնում է գույքն օտարողի մոտ: Հետևաբար, սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի առաջացումը չի նշանակում սեփականության իրավունքի փոխանցում: Բացի իրավական հիմքերից, անհրաժեշտ է որոշակի փաստական գործողությունների կատարում, որոնց հետ օրենքը կապում է հետևանքների առաջացումը»:¹ Բայց չէ որ, եթե գործողությունները օրենքի հիման վրա առաջացնում են միանգամայն հստակ իրավական հետևանքներ, նրանք արդեն դադարում են լինել փաստական: Այդպիսի գործողությունները հանդիսանում են իրավաբանական փաստեր և, հետևաբար, սեփականության իրավունքի առաջացման հիմքեր: Այս առումով մենք հիմնվում ենք Օ. Ա. Կոասավչիկովի այն արդարացի նկատառման վրա, որ յուրաքանչյուր գործողություն քանի դեռ փաստական է, չունի իրավական նշանակություն, չի կարող առաջացնել իրավական հետևանքներ:²

Որոշակի փաստական գործողությունների կատարումը սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է, բայց բավարար չէ: Օրինակ՝ գույքի փոխանցումը, որպես այդպիսին, թույլ չի տալիս մեզ պնդել սեփականության իրավունքի առաջացման մասին: Այն կարող է կատարվել նաև այնպիսի համաձայնությունների ուժով, որոնք սեփականության իրավունքի փոխանցման հետ որևէ կերպ կապված չեն, օրինակ՝ ժամանակավոր օգտագործման պայմանագրով: Սեփականության իրավունքը կարող է առաջանալ միայն այն ժամանակ, երբ գույքի փոխանցման հիմքում ընկած է այնպիսի իրավաբանական փաստ, որը հանդես է գալիս

¹ Տե՛ս Ս. Ս. **Попович М. М.**, Приобретение права собственности в гражданском праве России, Рязань 2002, էջ 66

² Տե՛ս Օ. Ա. **Красавчиков О. А.**, Юридические факты в советском гражданском праве, Москва 1958, էջ 153

որպես սեփականության իրավունքի ձեռքբերման հիմք:¹ Եվ քանի որ սեփականության իրավունքը դասվում է այն իրավունքների շարքին, որոնք կարգավորվում են միայն օրենքով, այդ պատճառով այն կարող է առաջանալ միայն այն հիմքերով, որոնք ուղղակիորեն սահմանված են օրենքով:

Ընդհանրացնելով փաստենք, որ սեփականության սուբյեկտիվ իրավունքը ծագում է սեփականության իրավունքի առաջացման հիմքեր հանդիսացող իրավաբանական փաստերի ուժով:

Այս տեսակետն են արտահայտում մի շարք իրավաբաններ: Մասնավորապես, Ա. Պ. Սերգեևը, նշում է. «Սեփականության իրավունքը դասվում է այն սուբյեկտիվ իրավունքների թվին, որոնք կարող են առաջանալ որոշակի իրավաբանական փաստի առկայության դեպքում, իսկ երբեմն էլ նաև դրանց համակցության դեպքում: Այդ իրավաբանական փաստերը կոչվում են սեփականության իրավունքի առաջացման հիմքեր»:² Նման տեսակետ ունի նաև Զ.Ա. Ախմետյանովը. «Այն իրավաբանական փաստերը, որոնց հետ օրենքը կապում է սեփականության իրավունքի ձեռքբերումը (առաջացումը), իրավաբանական գրականության և օրենսդրության մեջ կոչվում են սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքեր»:³ Այս տեսակետն էր իշխում նաև հռոմեական մասնավոր իրավունքում, որտեղ սեփականության իրավունքի առաջացման համար հիմք հանդիսացող իրավաբանական փաստերին կոչում էին «modus acquirendi» (սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներ):⁴

Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը ավանդաբար ընդունված է դասակարգել 2 խմբերի՝ սկզբնական և ածանցական: Այսպիսի սահմանազատման չափանիշ է համարվում իրավունքի փոխանցման կամ կամային հատկանիշը: Որոշ իրավաբան-

¹ Տե՛ս **Себельдина Дарья Вадимовна**, Способы и основания приобретения право собственности, էջ 107

² Տե՛ս **А. П. Сергеев**, Гражданское право, учебник, Том 1, Москва 2005, էջ 415

³ Տե՛ս **З. А. Ахметьянова**, Вещное право, Учебник, Казанский (Приволжский) Федеральный университет, § 10. Основания и способы приобретения права собственности. Приобретательная давность.

⁴ Տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, Հռոմեական մասնավոր իրավունք, ԵՊՀ հրատարակչություն 2010թ. էջ 53-54

գիտնականներ նախապատվությունը տալիս են իրավունքի փոխանցման հատկանիշին, որոշները՝ կամային հատկանիշին:

Բ. Մ. Գոնգալոն նշում է. «Այսպիսի դասակարգման չափանիշ է հանդիսանում իրավունքի փոխանցման առկայությունը (աժանցական եղանակի համար) և բացակայությունը (սկզբնական եղանակի համար), այսինքն՝ հիմնված է արդյոք սեփականատիրոջ իրավունքը նախկին սեփականատիրոջ իրավունքի վրա, թե այն ծագել է օրենքով նախատեսված հիմքերով: Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ առկա են նաև այլ տեսակետներ: Մասնավորապես, կա տեսակետ, համաձայն որի սկզբնական և աժանցական եղանակների սահմանազատումը անհրաժեշտ է կատարել կամային հատկանիշի հիման վրա, այսինքն՝ իրավունքը ծագում է նախորդ սեփականատիրոջ կամքով, թե անկախ նրա կամքից:¹

Պետք է նշել, որ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի շուրջ առկա այս տարաձայնությունը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Օրինակ՝ կամային հատկանիշի կողմնակիցները գտնում են, որ ազգայնացումը հանդիսանում է սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակ, քանի որ պետությունը այս դեպքում դառնում է սեփականատեր հակառակ նախորդ սեփականատիրոջ կամքի, իսկ ահա իրավունքի փոխանցման չափանիշի կողմնակիցները այն համարում են աժանցյալ եղանակ, քանի որ ազգայնացման դեպքում առկա է իրավունքի փոխանցում:

Կարծում ենք, առավել նպատակահարմար է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակները դասակարգել ըստ իրավունքի փոխանցման հատկանիշի, իսկ ինչ վերաբերում է կամային հատկանիշին, ապա այն ոչ բոլոր դեպքերում է իրավացի կապված պրակտիկայում առկա տարբեր իրավիճակների հետ: Այսպես, ժառանգը, ով ունի պարտադիր բաժին (պարտադիր ժառանգ), ստանում է այդ բաժինը անկախ նախորդ սեփականատիրոջ կամքի, այսինքն՝ ժառանգատուի: Սակայն, անկասկած այս դեպքում ժառանգումը հանդիսանում է սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների աժանցական եղանակ: Իսկ ահա իրավունքի փոխանցման հատկանիշի կողմնակիցների համար այս իրավիճակի

¹ См. и Б. М. Гонгало, Гражданское право, учебник, в 2 томах, Том 1,2-е издание, переработанное и дополненное, Москва 2017, т.2 334

դասումը սեփականության իրավունքի ձեռքբերման ածանցական եղանակների թվին որևէ դժվարություն չի առաջացնում, քանի որ պարտադիր բաժնի ժառանգումը հիմնված է իրավունքի փոխանցման վրա:

Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերի դասակարգման (սկզբնականի և ածանցականի) իրավական նշանակությունն ակնհայտ է՝ կախված սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակներից տարբեր է գույքի իրավական կարգավիճակը: Եթե սեփականության իրավունքը ձեռք է բերվում ածանցական եղանակով, ապա, համաձայն ընդհանուր այն կանոնի, ըստ որի «ոչ ոք չի կարող մեկ այլ անձի փոխանցել ավելի շատ իրավունքներ, քան ինքն ունի իր գույքի նկատմամբ»¹, նոր սեփականատիրոջը այդ գույքի նկատմամբ իրավունքներն անցնում են այն նույն ծավալով, ինչ ծավալով, որ դրանք ունեցել է նախկին սեփականատերը, այդ թվում՝ համապատասխան պարտավորությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Իսկ եթե սեփականության իրավունքը ձեռք է բերվում սկզբնական եղանակով, ապա քանի որ նոր սեփականատերը գույքը ձեռք չի բերել նախկին սեփականատիրոջից, կամ նրա իրավունքը առաջացել է անկախ նախկին սեփականատիրոջ իրավունքից, նա ձեռք է բերում իրավունքներ այդ գույքի նկատմամբ, այն ծավալով, որն ամրագրված է սեփականության իրավունքը կարգավորող նորմերով: Օրինակ՝ գրավի առարկա հանդիսացող գույքի գնման ժամանակ գույքի գրավով ծանրաբեռնվածությունը պահպանվում է, քանի որ պայմանագրի հիման վրա ձեռքբերումը ածանցական եղանակ է և նոր սեփականատերը իրավունքի հետ միասին նախորդ տիրոջից ստանում է նաև այդ գույքի հետ կապված ծանրաբեռնվածությունը և բոլոր պարտավորությունները: Իսկ ահա նույն գույքը որպես գտանք ձեռք բերելու դեպքում, այն ընդհանրապես ծանրաբեռնված չէ:²

Գործող քաղաքացիական օրենսդրությունը ուղղակիորեն չի սահմանում, սեփականության իրավունքի առաջացման որ հիմքն է սկզբնական, որը՝ ածանցական, թույլատրելով համապատասխան

¹ Տե՛ս **Է. Ա. Суханов**, Российское гражданское право, Учебник, В 2 томах, Том 1, Москва 2011, էջ 518

² Տե՛ս **Բ. М. Гонгало**, Гражданское право, учебник, в 2 томах, Том 1,2-е издание, переработанное и дополненное, Москва 2017, էջ 334

հետևություններ անել քաղաքացիական իրավունքի տեսաբաններին և գիտնականներին: Այսպիսի իրավիճակը տարակարծությունների տեղիք է տալիս սեփականության իրավունքի առաջացման հիմքերի դասակարգման վերաբերյալ, մասնավորապես ազգայնացման (պետականացման), բռնագրավման և ռեկվիզիցիայի (առգրավման) դեպքերում: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել «իրավունքի փոխանցում» եզրույթը, քանի որ վերջինս, ինչպես արդեն վերը նշեցինք, հանդիսանալով դասակարգման կարևորագույն հիմքը, դրսևորվում է այն բանում, որ սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է համապատասխան իրավունքի առկայությունը նախորդ սեփականատիրոջ մոտ: Օրինակ, կասկածի տեղիք չի տալիս օտարման, ժառանգման և իրավաբանական անձի վերակազմակերպման պայմանագրի դատումը սեփականության իրավունքի ձեռքբերման ածանցական եղանակների թվին, քանի որ այդ մասին ոչ ուղղակիորեն նշում է նաև օրենսդիրը, մասնավորապես Օրենսգրքի 172-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում նրան պատկանող գույքի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդ իրավաբանական անձին: Ակնհայտ է, որ օրենսդրի կողմից առաջ քաշված «սեփականության իրավունքի անցում» եզրույթը վկայում է այն մասին, որ սեփականատիրոջ իրավունքի առաջացումը կախված է նախորդ սեփականատիրոջ իրավունքից: Եթե գույքը որպես նյութական ինքնուրույն առարկա ստեղծվում է առաջին անգամ, ապա այստեղ կարելի է նորից վստահ ասել գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակի մասին (օր.՝ նոր գույքի ստեղծումը՝ Օրենսգրքի 172-րդ հոդված, 1-ին մաս), քանի որ նախկինում բացակայում էր այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, որից կարող էր կախված լինել սեփականատիրոջ իրավունքը: Սեփականության իրավունքի ձեռքբերումը գտանքի ու գանձի նկատմամբ համարվում է սկզբնական, քանի որ դրա հիմքերը կապված չեն նախորդ սեփականատիրոջ իրավունքի առկայության հետ: Օրինակ՝ գտանքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման համար ընդհանրապես նշանակություն չունի, թե ով է եղել նախկինում այդ գույքի սեփականատերը, ե՞րբ և ի՞նչ հիմքերով է նա այն ձեռք բերել: Սեփականության

իրավունքի ձեռքբերումը ազգայնացման, բռնգրավման և ռեկվիզի-
ցիայի միջոցով կարծում ենք՝ պետք է համարել ածանցական, քանի
որ պետական սեփականության իրավունքի առաջացումը այդ գույ-
քի նկատմամբ կապված է այն հանգամանքի հետ, որ այդ գույքը
նախկինում եղել է կոնկրետ անձանց մասնավոր սեփականության
առարկա: Ելնելով վերը նշված հանգամանքներից և այսօր առկա
տարատեսակ մոտեցումներից այս հարցի շուրջ, կարծում ենք, որ
կա խիստ անհրաժեշտություն սեփականության իրավունքի ձեռք-
բերման եղանակների դասակարգմանը տալու օրենսդրական ամ-
րագրում, հստակ սահմանելով, թե կոնկրետ որ եղանակներն են
համարվում սկզբնական, և որոնք՝ ածանցական:

Հարկ է նշել նաև, որ բացի սկզբնական և ածանցական եղա-
նակներից, քաղաքացիական իրավունքի որոշ տեսաբաններ օգտա-
գործում են նաև այլ դասակարգումներ: Մասնավորապես, Ե. Ա.
Մուխանովը սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակնե-
րը դասակարգում է նաև այսպես կոչված «ընդհանուր» և «հատուկ»
եղանակների: Ընդհանուր են կոչվում այն եղանակները, որոնք կա-
րող են օգտագործվել քաղաքացիական իրավունքի ցանկացած
սուբյեկտի կողմից: Այդպիսիք են օրինակ այն իրավահարաբերու-
թյունները, որոնք ծագում են տարատեսակ գործարքների հիման
վրա: Իսկ հատուկ կոչվում են այն եղանակները, որոնք կարող են
օգտագործվել միայն կոնկրետ սուբյեկտների կողմից: Այսպես, գույ-
քի պետականացումը, բռնագրավումը, առգրավումը կարող են
հանդիսանալ միայն պետական սեփականության առաջացման
հիմք, մինչդեռ մասնավոր սեփականատերերի համար դրանք հան-
դիսանում են համապատասխան գույքի նկատմամբ սեփականու-
թյան իրավունքի դադարման հիմք: Քաղաքացիների և իրավաբանա-
կան անձանց սեփականության իրավունքի առաջացման հատուկ
հիմք է հանդիսանում նաև պետական և համայնքային գույքի մաս-
նավորեցումը, որն էլ իր հերթին հիմք է հանդիսանում հանրային

սեփականության դադարման համար:¹ Այսպիսի դասակարգում է առաջարկում նաև Զ. Ա. Ախմետյանովը:²

Арман Тадевосян, Общая характеристика и классификация оснований возникновения права собственности – Гражданское законодательство, относящееся к правособственности, применяет понятия «возникновение» и «приобретение». При использовании слова «приобретение» упор делается на субъекта права собственности. А вот слово «возникновение» используется не для субъекта права, а для субъективного права, возникающего у субъекта.

Гражданский кодекс РА не дает четкого определения, что является первоначальной основой возникновения права собственности, и которое является производным. Это приводит к ряду разногласий среди ученых-юристов. Мы видим необходимость, дать эту классификацию четкую и полноценную законодательную фиксацию.

Arman Tadevosyan, General characteristic and classification of the basis of the emergence of ownership - Civil legislation relating to the right of ownership applies the concepts of “emergence” and “acquisition. When using the concept “acquisition”, the emphasis is on the subject of the right of ownership. While the word “emergence” is used not for the subject of the right, but for the subjective right arising from the subject.

The Civil Code of the Republic of Armenia does not give a clear definition of what basis is the initial for the emergence of the right of ownership, and which is derivative. This leads to several disagreements among legal scholars. We see the need to give this classification a clear and complete legislative fixation.

¹ Տե՛ս Ռոսսիյսկոե ցրաճճանկոե քրաճ, սչեբնիկ, Վ 2 տոախ, տոմ 1, **Ե. Ա. Տսխանով**, Մոսկճա 2011, էջ 519

² Տե՛ս **Յ. Ա. Ախմետյանով**, Վեշնոե քրաճ, Սչեբնիկ, Կաճանսկիյ (Քրիճոլճսկիյ) Փեճերալնիյ Միճիճստետ, § 10. Օսնոճանիա և սոսոբոյ քրիճրետենիա քրաճ սոսեբնոստենի. Քրիճրետենիա ճաճնոստեն.